



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի Մ Ա Ր Ջ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» հունիսի 2010թ
ք. Եղեգնաձոր

N 59

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐՋՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1794-Ն որոշման 30-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 329-Ն որոշմամբ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի բ) ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՅ-728 հրամանագրի 1.6 կետի պահանջներով .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության (հավելված 1), առողջապահության և սոցիալական ապահովության վարչության (հավելված 2), քաղաքաշինության վարչության (հավելված 3), գյուղատնտեսության և բնապահպանության վարչության (հավելված 4), տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության (հավելված 5), կրթության, մշակութի և սպորտի վարչության (հավելված 6), քարտուղարության (հավելված 7), հողաշինության և հողօգտագործման բաժնի- մարզային հողային պետական տեսչության (հավելված 8) կանոնադրությունները:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2003 թվականի ապրիլի 28-ի թիվ 26 որոշումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ